ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ*

ՀՏԴ 330(430)

Թաթուլ Մանասերյան
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
tatoulm@gmail.com

Հետպատերազմյան շրջանում գործարարները դիմագրավում են կայուն զարգացման շրջանի համար անծանոթ, նոր հիմնախնդիրներ: Դրանք բազմաբնույթ են և յուրաքանչյուր երկրի համար որոշակի առանձնահատկություններով օժտված, այնուամենայնիվ, ուսանելի է վերլուծել նման իրավիճակներում հայտնված երկրների փորձը, իսկ առանձին դեպքերում հնարավոր է անգամ այն տեղայնացնել՝ հաշվի առնելով Հայաստանի և Արցախի յուրահատուկ պայմանները: Հետպատերազմյան շրջանում տնտեսական ռիսկերի կառավարման առումով բավական ուսանելի է փորձ է կուտակել Գերմանիան, որին հաջողվեց հասնել մրցունակության բարձր մակարդակի և այդ հենքի վրա ձեռնարկվեց և հաջողությամբ ավարտվեց նաև Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության միավորման յուրահատուկ գործընթացը, ինչը պատմության մեջ բացառիկ է այն առումով, որ այդ պետություններն ունեին ոչ միայն տնտեսական, սոցիալական, այլև քաղաքական միանգամայն տարբեր համակարգեր: Արդյունքում՝ երկրորդ համաշխարհային պատերազմում պարտված, քայքայված տնտեսություն ունեցող երկիրը զարգացավ, վերամիավիավորվեց և դարձավ աշխարհի ամենազարգացած երկրներից մեկը և կարևոր դեր խաղաց Եվրամիության ձևավորման գործում, միաժամանակ դառնալով տնտեսությունների կոնվերգանցիայի հաջողված օրինակ: Համախառն ազգային արտադրանքի (արդյունքի) ծավալով կապիտալիստական աշխարհում գրավում է երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից ու Ճապոնիայից հետո և զարգացման մակարդակով հետարդյունաբերական երկիր է: Այս ամենն, իհարկե, նպաստող գործոններ են, իսկ որոշիչը հետպատերազմյան Գերմանիայի տնտեսական ռիսկերի կառավարման գործում այն բարեփոխումներն էին, որոնք մշակվեցին և իրագործվեցին Լյուդվիգ Էրհարդի սոցիալական շուկայական տնտեսության ծրագրով:

Բանալի բառեր՝ *ռիսկերի կառավարում, վերականգնողական աճ, կոնվերգենցիա,, մրցունակություն, ՀՆԱ:*

---

* Հոդվածը ներկայացվել է 25.03.2022:
Տպագրության է երաշխավորել տ.գ.թ. Կ. Մելքոնյանը: 04.04.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 04.04.2022:

Ներածություն

Ռիսկերի կառավարման գործընթացն ավելի է դժվարանում հետպատերազմյան շրջանում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տնտեսությունն ու տնտեսվարողներն, ի լրումն նախկին ռիսկերի, առերեսվում են նաև կայուն զարգացման շրջանի համար անծանոթ, նոր խնդիրների հետ: Դրանք բազմաբնույթ են և յուրաքանչյուր երկրի համար որոշակի առանձնահատկություններով օժտված, այնուամենայնիվ, ուսանելի է վերլուծել նման իրավիճակներում հայտնված երկրների փորձը, իսկ առանձին դեպքերում հնարավոր է անգամ այն տեղայնացնել՝ հաշվի առնելով Հայաստանի և Արցախի յուրահատուկ պայմանները: Մենք ավելի հանգամանալից փորձել ենք անդրադառնալ Գերմանիայի տնտեսությունում հետպատերազմյան շրջանի ռիսկերի կառավարման խնդիրներին՝ ուսումնասիրություններում ներառելով նաև հետագա զարգացման համար որոշակի նախապայմանների և հիմքերի ձևավորման գործընթացները:

Վերլուծություն

Հետպատերազմյան շրջանում տնտեսական ռիսկերի կառավարման առումով բավական ուսանելի փորձ է կուտակել Գերմանիան, որին հաջողվեց հասնել մրցունակության բարձր մակարդակի և այդ հենքի վրա ձեռնարկվեց և հաջողությամբ ավարտվեց նաև Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության միավորման յուրահատուկ գործընթացը, ինչը պատմության մեջ բացառիկ է այն առումով, որ այդ պետություններն ունեին ոչ միայն տնտեսական, սոցիալական, այլև քաղաքական միանգամայն տարբեր համակարգեր[1]: Արդյունքում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտված, քայքայված տնտեսություն ունեցող երկիրը զարգացավ, վերամիավիավորվեց և դարձավ աշխարհի ամենազարգացած երկրներից մեկը և կարևոր դեր խաղաց Եվրամիության ձևավորման գործում՝ միաժամանակ դառնալով տնտեսությունների կոնվերգանցիայի հաջողված օրինակ: Համախառն ազգային արտադրանքի (արդյունքի) ծավալով կապիտալիստական աշխարհում գրավում է երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից ու Ճապոնիայից հետո և զարգացման մակարդակով հետարդյունաբերական երկիր է: Գերմանիայում ռիսկերի կառավարման, տնտեսության մրցունակության բարձրացման և զարգացման ամբողջ շրջանում անհամեմատելի մեծ է եղել պետության դերը, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ ազգային տնտե-

[1] 1945 թ՝ II համաշխարհային պատերազմից հետո, Գերմանիան բաժանվեց օկուպացված չորս գոտու՝ ԽԱՀՄ-ի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջև: 1949 թ. վերջին երեք գոտիները միացան և ստեղծվեց ԳՖՀ-ն՝ սոցիալ-շուկայական տնտեսությամբ, իսկ ԽԱՀՄ-ի գոտում՝ ԳԴՀ-ն, որտեղ գործում էր պլանային տնտեսության վարչահրամայական համակարգը: Հազարամյա ռեյխի գաղափարը ճնշվեց՝ չգոյատևելով անգամ 12 տարի: Գրուսս - ադմիրալ Կարլ Դյունիցը, ով փոխարինեց ռեյխ – կանցլերին, հայտարարեց, սակայն, որ Գերմանիան մնում է նախկին պետությունը, իսկ նացիոնալ սոցիալիզմի գաղափարները ապրում և ամրանում են նախկինից ավելի եռանդուն: Սակայն տեղի ունեցավ Նյուրնբերգյան դատավարությունն, որից հետո՝ դաշնակից պետությունների ղեկավարների բեռլինյան կոնֆերանսը, որտեղ հայտարարվեց, որ Նացիստական կուսակցության բոլոր անդամներն, որոնք հանդիսանում էին դրա գործունեության ակտիվ մասնակիցներ, և դաշնակիցների նպատակներին թշնամաբար տրամադրված այլ անձիք պետք է հեռացվեն պետական և մասնավոր հատվածներում իրենց պաշտոններից և բոյկոտի էին ենթարկում:

ության վերականգնման սկզբնական շրջանում, հենց պետությունն էր ապահովում հասարակական կայունությունը և սոցիալական պաշտպանվածությունը: Իսկ Պատերազմից առաջ և դրա ընթացքում տնտեսության մեջ տիրում էր պետական ուղղակի հարկադրանքը: Ընդսմին, կարևոր է պարզել, թե ինչի շնորհիվ Երկրորդ աշխարհամարտում պարտված, քայքայված տնտեսություն ունեցող Գերմանիան տնտեսական զարգացման թռիչք կատարեց և անգամ առաջ անցավ իրեն հաղթած բոլոր երկրներից՝ բացառությամբ ԱՄՆ-ի: Փորձագետների վկայությամբ, ռիսկերի կառավարման հարցում հիմնական գործոնը շուկայական հարաբերությունների առավելագույն արդյունավետ զարգացումն էր ու տնտեսության ազատականացումը[1]: Մյուսն այն էր, որ հետպատերազմյան տասնամյակներում աշխատավորներին վճարվող ցածր վարձատրության շնորհիվ խնայված գումարներով ստեղծվեցին արտադրական նոր ձեռնարկություններ: Կարևոր էր նաև մեքենաների ու սարքավորումների հիմնովին նորացումը: Մեծ դեր խաղաց ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի՝ Գերմանիային ցույց տրվող ֆինանսական օգնությունը: Կարևոր գործոն է նաև գերմանացիներին բնորոշ օրինապահությունը, կարգապահությունն ու բարձր արհեստավարժությունը, և վերջապես՝ տնտեսական ներուժի միավորումը:

Մեր համոզմամբ, նշվածները միայն նպաստող գործոններ են, իսկ որոշիչը հետպատերազմյան Գերմանիայի տնտեսական ռիսկերի կառավարման գործում այն բարեփոխումներն էին, որոնք մշակվեցին և իրագործվեցին Լյուդվիգ Էրհարդի սոցիալական շուկայական տնտեսության ծրագրով:

Իրականում Գերմանիայի 40 մլն. ազգաբնակչության գերակշիռ մասը սովի էր մատնված, երկիրը կորցրել էր իր բնակչության մոտ 10% -ը, ինչպես նաև՝ արտադրական պոտենցիալը, բաժանվել չորս օկուպացիոն տարածքների և գտնվում էր ծանր տնտեսական վիճակում: Թեև ինֆլյացիան այնպիսի ֆանտաստիկ մակարդակների չէր հասնում ինչպես 20-ականներին, այնուամենայնիվ, ինչ–որ բան գնելն անհնար էր (օրինակ՝ սուրճի մեկ կիլոգրամը 1500 մարկ էր, ծխախոտը՝ 6, իսկ ամսական եկամուտը՝ 200 մարկ): Սրանք պարզապես ռիսկեր չէին, այլ՝ գոյատևման իրական սպառնալիքներ: Հետևաբար, կարևոր է պարզել, թե ինչպես ոտքի կանգնեց Գերմանիան, ինչպես կարճ ժամանակում բարգավաճեց և հասավ կայուն և մրցունակ վիճակի:

Լյուդվիգ Էրհարդը հանդես էր գալիս սոցիալական շուկայական տնտեսության ձևավորման օգտին[2]: Նա հակված էր այն տեսակետին, որ մարդը փորձում է այնպիսի որո-

---

[1] Diessner S, Durazzi N, Hope D. Skill-Biased Liberalization: Germany's Transition to the Knowledge Economy. *Politics & Society.* April 2021. doi:10.1177/00323292211006563

[2] 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ նա կազմակերպել է մասնավոր գիտահետազոտական ինստիտուտ, որը զբաղվում էր ինդուստրիալ հասարակարգի տնտեսության ուսումնասիրությամբ: Պետական մարմինների հանձնարարությամբ Էրհարդը զբաղվում էր հետպատերազմյան արտադրության պլանավորմամբ: Էրհարդը դարձավ Բավարիայի էկոնոմիկայի նախարար և հնարավորություն ստացավ երկրում ներդնել շուկայական տնտեսություն: Էրհարդի կողմից մշակված օրենքի հիման վրա 21.06.1948թ.-ին գործնականում չեղյալ համարվեց Տնտեսության և Ֆինանսների ոլորտում մինչ այդ գործող կանոնակարգը, որը հիմնականում առկա էր գնագոյացման ոլորտում: Կոնրադ Ադենաուեռը՝ Քրիստոնեա-դեմոկրատական Միության (ՔԴՄ) առաջնորդը, հրավիրեց բավարացուն ելույթ ունենալ ՔԴՄ ղեկավար մարմնի նիստում: Էրհարդը հասկանում էր, որ իր պլանները կարող են իրագործվել միայն Ադենաուեռի կուսակցության հետ, քանի որ մյուս խոշոր կուսակցությունները՝ սոցիալ-

շումներ կայացնել, որոնք կբարձրացնեն նրա կենսամակարդակը: Ինչքան բարձր է բնակչության կենսամակարդակը, այնքան ավելի լավանում են տնտեսության զարգացման պայմանները: 1948թ. հունիսին տնտեսության վերականգնման և զարգացման նրա նոր ծրագիրը պաշտոնապես ընդունվեց: Այդ ժամանակ սկսվեց նաև գործել Մարշալի ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում Գերմանիան ստացավ 1,4 մլդ. դոլար: Մյուս երկրներին տրամադրած օգնության տեսակարար կշիռները ներկայացված են աղյուսակում:

Կործանված երկիրն իրենից ներկայացնում էր ահռելի մեծ իրացման շուկա: Նացիզմի և հետպատերազմյան քաոսին հաջորդող տարիներին բնակչությունն ուներ բառացիորեն ամեն ինչի կարիք: Երկրում կային աշխատանքային մեծ ռեսուրսներ: Նույնիսկ ամենածանր ժամանակներում նացիստները բանակ չէին զորակոչում որակյալ մասնագետներին: Էրհարդի կողմից շարունակվող ծրագիրը մեծ վեճերի առիթ տվեց:

Աղյուսակ 1. ԱՄՆ-ի տրամադրած օգնության բաշխումը և տեսակարար կշիռները, 1948-1951թթ. (մլն ԱՄՆ դոլար և ՀՆԱ-ի %)[1]

	Միլիոն դոլար	Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում
Միացյալ Թագավորություն	2826.0	1.8
Ֆրանսիա	2444.8	2.2
Իտալիա	1315.7	2.3
Արևմտյան Գերմանիա	1297.3	1.5
Հոլանդիա	877.2	4.0
Ավստրիա	560.8	5.7

դեմոկրատական կուսակցությունները, համառորեն հանդես էր գալիս պլանային տնտեսության, արդյունաբերության ազգայնացման և կոշտ պետական կարգավորման օգտին: Էրհարդին լսում էին ուշադիր: Ելույթը սղագրվում էր: Նա համոզիչ կերպով ապացուցեց, որ պլանային տնտեսությունը, կայուն գների հաստատումը կբերի առաջարկ-պահանջարկ հավասարակշռության խախտման, արտադրությունը կտեղափոխվի ստվերային կառույցներ, ապրանքները՝ սև շուկա, մրցակցությունը՝ կվերացվի: 1949թ. ՔԴՄ–ն հաղթում է խորհրդարանային ընտրություններում, Ադենաուերը դարձավ 1-ին հետպատերազմյան Կանցլերը, իսկ էրհարդը՝ էկոնոմիկայի նախարար:Սկսվեց կյանքի կոչվել սոցիալական շուկայական տնտեսության տեսությունը:

[1] The Marshall Plan : a reality check, N. Crafts, Published 1 August 2011, Political Science, https://www.semanticscholar.org/paper/The-Marshall-Plan-%3A-a-reality-check-Crafts/84703f9fdc5693011889439b0927d71c1b4c9bc0

Բելգիա և Լյուքսեմբուրգ	546.6	2.2
Եվրոպական վճարային միություն	350.0	-
Դանիա	257.4	2.2
Նորվեգիա	236.7	2.5
Շվեդիա	118.5	0.4

1948թ. բարեփոխումների հետևանքով առաջացած ապրանքների դեֆիցիտը բերեց մի շարք բացասական հետևանքների՝ մասնավորապես՝ գների բարձրացման, գնողունակության իջեցման և սպառողական ապրանքների ավելցուկային արտադրության: Գործը հասավ համընդհանուր գործադուլի: Սակայն նախարար Էրհարդը կարողացավ ժամանակին արձագանքել ծագած դժվարություններին և 1950-1951թթ. ընթացքում մտցրեց անհրաժեշտ ժամանակավոր շտկող միջոցներ իր կողմից կատարվող ծրագրերում[1]: Եվ միայն կայուն, իմպերատիվ, տնտեսական աճով պայմանավորված նկատելի փոփոխություններից հետո Էրհարդի ծրագիրը համընդհանուր ճանաչում ձեռք բերեց: Էրհարդն իր ռեֆորմի մեջ տեսնում էր նպաստավոր գործոններ: Մնում էր հնարավորինս արդյունավետ դրանք օգտագործել: Էկոնոմիկայի նախարարությունը, կիրառելով տնտեսական մեթոդները, հմտորեն ուղղեց ներդրումները դեպի արդյունաբերության հիմնական ճյուղերը՝ ծանր արդյունաբերություն, մետալուրգիա[2], մեքենաշինություն, քիմիական ձեռնարկությունները, էլեկտրոտեխնիկական գործարանները: Դրանց հիման վրա սկսեցին աշխատել թեթև և վերամշակող արդյունաբերությունները, պայմաններ էին ստեղծվում փոքր և միջին ձեռնարկությունների համար: Հարկային արտոնությունների համակարգը հնարավորություն էր տալիս շահույթի զգալի մասն օգտագործել տեխնիկան վերազինմա, նորագույն տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Հատկապես խրախուսվում էին արտահանումների վրա աշխատող ձեռնարկությունները: Էրհարդի նախարարությունն ընդունեց և իրականացրեց դրանց հետ կապված մի շարք հատուկ

[1] Berghahn, Volker R. "Ordoliberalism, Ludwig Erhard, and West Germany's "economic basic law"." European Review of International Studies 2.3 (2015): 37-47; Goldschmidt, Nils. "Alfred Müller-Armack and Ludwig Erhard: Social Market Liberalism" (No. 04/12. Freiburg discussion papers on constitutional economics, 2004).

[2] Սև մետաղաձուլությունը կենտրոնացավ Հռենոս-Վեստֆալիայում և Սաարում: Գունավոր մետաղաձուլության ճյուղերից առավել զարգացած են ալյումինաձուլությունը և պղնձաձուլությունը: Վառելիքաէներգետիկական արդյունաբերությունը հենվում է ներկրվող նավթի ու բնական գազի, ինչպես նաև՝ սեփական քարածխի, գորշ ածխի, ուրանի և երկրի հարավի լեռնային գետերի ջրաէներգետիկ պաշարների վրա: Ածխի հանույթով Գերմանիան աշխարհում գրավում է 5-րդ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությամբ՝ 6-րդ տեղը: Գերմանիայում ավելի շատ էլեկտրաէներգիա է արտադրվում, քան Աֆրիկա աշխարհամասի բոլոր երկրներում միասին: Երկրի համարյա բոլոր քաղաքներում կան թեթև արդյունաբերական, հատկապես՝ տեքստիլ, ու կաշվի-կոշկեղենի ձեռնարկություններ: Զարգացած են նաև սննդի արդյունաբերության ճյուղերը, հատկապես՝ գարեջրի արտադրությունը:

ծրագրեր[1]: Կառավարությունն իր վրա վերցրեց առևտրային գործարքների ռիսկերի մի մասը, ֆինանսավորում էր խոշոր արտասահմանյան գործարքներ, տրամադրում էր հարկային արտոնություններ: Արտահանումը հանդիսացավ տնտեսական զարգացման բազիսային գործոններից մեկը, նպաստեց ոսկու և արժույթային պաշարների աճին: Գերմանական մարկն աստիճանաբար դարձավ աշխարհի ամենաամուր արտարժույթներից մեկը: Սկսվեց ձևավորվել արդյունավետ հակամենաշնորհային ծրագիր: Մենաշնորհացված միավորումները չէին արգելակում, բայց նրանց իրավունքների վրա խիստ սահմանափակումներ էին դրվում, օրինակ՝ մրցակցության սահմանափակման և գների արհեստական բարձրացման սահմանափակում: Լավ մտածված տնտեսական ծրագիրը բացառում էր քրեական կապիտալ ստեղծելու հնարավորությունը, կապիտալի հոսքը դեպի այսպես կոչված «ստվերային կառուցվածքները» և արտահոսք դեպի արտերկիր: Հարկային հմուտ քաղաքականությունը գրավիչ պայմաններ ստեղծեց արտադրությունում նորդրումների համար: Արդյունաբերական արտադրությունում վերազինում տեղի ունեցավ. մահանում էին հին ճյուղերը և ստեղծվում՝ նորերը:

Արդյունաբերության հետ զուգընթաց աստիճանաբար զարգացավ նաև գյուղատնտեսությունը: Այն հասավ նախապատերազմյան մակարդակին, իսկ 1953թ. նույնիսկ գերազանցեց այն[2]: Աշխարհում խոսեցին «Գերմանական հրաշքի» մասին: 1950թ. Գերմանիան հասավ արդյունաբերության նախապատերազմյան մակարդակին, 1956թ. այն կրկնապատկվեց՝ 1950թ. համեմատ, իսկ 1962թ. եռապատկվեց: Ընդլայնվեց բնակարանաշինությունը, գրեթե վերացավ գործազրկությունը, նույնիսկ հայտնվեցին արտասահմանցի աշխատողներ: Կարճ ժամանակում վերացավ «սև շուկան»խանութները լցվեցին ապրանքներով: Սոցիալական շուկայական տնտեսության հիմնական էլեմենտներից էր փոքր և միջին բիզնեսը, պետությունն ամեն կերպ նպաստում էր դրա զարգացմանը: 1953թ. դրությամբ փոքր և միջին ձեռնարկություններում աշխատում էին զբաղվածների 50 տոկոսից ավելին: Զգալիորեն կրճատվել էր պետության միջամտությունը երկրի տնտեսության մեջ: Կրճատվեցին պաշտպանության և անվտանգության վրա կատարվող ծախսերը: Սոցիալական շուկայական տնտեսությունը 50-ականներին ամբողջ թափով դրսևորեց իր դրական արդյունքները: Մարդիկ տեսան տնտեսական վերելքի և բարեփոխումների արդյունքները, որոնք լավ հիմք դրեցին Գերմանիայի տնտեսության հետագա զարգացման համար, 60-ականներին Գերմանիան մտավ աշխարհի առավել զարգացած երկրների ցանկը: Էրհարդի համոզմամբ՝ տնտեսության հաջող զարգացման հիմնական գործոնները հետևյալներն են. ձեռնարկատերերի հնարամտությունը, աշխա-

---

[1] *Gray, William Glenn (2007). "Adenauer, Erhard and the Uses of Prosperity". German Politics and Society. 25 (2): 86–103.* doi:10.3167/gps.2007.250206; Henderson, David R. "German Economic Miracle." The Concise Encyclopedia of Economics (2008).

[2] Գյուղատնտեսության նշանակությունը երկրի տնտեսության մեջ զգալի է, չնայած այդ ոլորտի տեսակարար կշիռն անընդհատ նվազում է: Գյուղատնտեսական արտադրությունն աչքի է ընկնում բացառիկ բարձր ինտենսիվությամբ: Եթե 1950թ. գյուղատնտեսական մեկ աշխատողն արտադրում էր այնքան արտադրանք, որը բավարար էր 10 մարդու, ապա 2020 թվականին՝ 75 մարդու կերակրելու համար: Երկրի գյուղատնտեսության մեջ գերիշխողն անասնապահությունն է: Գյուղատնտեսական ապրանքների շարքում արժեքային արտահայտմամբ գերակշռում են կաթը, խոզի ու տավարի միսը, հացահատիկը, շաքարի ճակնդեղը: Դրանց արտադրությունը տեղաբաշխված է Գերմանիայի գրեթե ողջ տարածքում: Հարավային մասերում աճեցնում են խաղող:

տավորների կարգապահությունը և աշխատասիրությունը, կառավարության հմուտ քաղաքականությունը[1]:

Գերմանիայի մասնակցությունը, շնորհիվ իր մրցունակ տնտեսության, մշտապես ակտիվ է եղել եվրոինտեգրման գործընթացներում: Գերմանիայի վերամիավորման արդյունքում արմատապես փոխվեց նրա դերը Եվրոպայում և աշխարհում, հետևաբար նաև՝ հարաբերություններն այլ երկրների, ինչպես նաև Եվրամիության անդամ երկրների հետ: Միաժամանակ, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մեծ փոփոխություններ տեղի ունեցան Եվրոպայում ուժերի վերաբաշխման իմաստով[2]: Փոփոխվել է եվրոպական ինտեգրման գործընթացների բնույթը և ԳՖՀ-ի դերը Եվրոպայում և աշխարհում: Դա հատկապես՝ կապված էր Գերմանիայի վերամիավորման հետ[3]: Վերամիավոր-

---

[1] *Thiemeyer, Guido (2007). "The 'Social Market Economy' and Its Impact on German European Policy in the Adenauer Era, 1949–1963". German Politics and Society. 25 (2): 68–85; Van Hook, James (2004). "Ludwig Erhard, the CDU, and the Free Market".* Rebuilding Germany: The Creation of the Social Market Economy, 1945–1957. *New York:* Cambridge University Press. *pp.* 139*–188.*

[2] Սկզբնական շրջանում Գերմանիան որպես գերտերություն դուրս էր մղված համաշխարհային քաղաքականությունից: Ստեղծվեց հակամարտության նոր օջախ՝ Վարշավյան պայմանագրի անդամ երկրների և ՆԱՏՕ-ի անդամ երկրների միջև: Զգալիորեն ուժեղացավ ԱՄՆ-ի դերը Եվրոպական աշխարհամասում: Այս պայմաններում Եվրոպայի ինտեգրման գործընթացներն ավելի արդիական դարձան թե՛ ամերիկյան արտահանվող ապրանքների իրացման թե՛ աշխարհամասի խաղաղության և կայունացման տեսակետից: Այնուհետև՝ 1951թ. Գերմանիան Բելգիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Լյուքսենբուրգի և Նիդերլանդների հետ ստեղծվեց «Ածխի և պողպատի «Եվրոպական միավորում» իսկ 1957թ.՝ «Եվրոպական տնտեսական համագործակցություն» և «Ատոմային էներգիայի Եվրոպական համագործակցությունը»: 1986թ. «Միացյալ Եվրոպական ակտի» ու 1992թ. փետրվարի 7-ին Մաստրիխտում ստորագրված «Եվրոպական միության» վերաբերյալ պայմանագրի և 1997թ. հոկտեմբերի 2-ի ամստերդամյան նոր պայմանագրի շնորհիվ, կատարվեցին կարևոր քայլեր Եվրոպայի միավորման ուղղությամբ: Մաստրիխտյան պայմանագիրը սկիզբ դրեց տնտեսական և քաղաքական միության ստեղծմանը: Ընդհանուր արժույթի՝ եվրոյի ձևավորման 3-րդ և վերջին էտապը սկսվեց 1999թ. հունվարի 1-ին: Այսօր Գերմանիան Եվրամիությունում առաջատար տեղ է գրավում, քանի որ ամենամեծ ներդրումն ունի Եվրամիության բյուջեի ֆինանսավորման մեջ: Գերմանիայի ԵՄ-ում մասնակցության հիմնական բնութագիրը գտնվում է փոխադարձ կախվածության մեջ՝ Գերմանիայի մասնաբաժինը ԵՄ բյուջեում, նրա որոշիչ դերը ԵՄ-ում, իր հերթին ուղղակիորեն կախված է Գերմանիայի՝ ԵՄ-ում քաղաքական ակտիվությունից: Այդ քաղաքականության իրագործման արդյունքում ԵՄ զարգացումը որոշում է Գերմանիայի աճող դերն ինտեգրվող Եվրոպայում: ԳՖՀ-ն Եվրոպական ինտեգրման գործընթացների զարգացման ակտիվ մասնակից է:

[3] 1990թ. հոկտեմբերի 3-ին ԳԴՀ-ն և ԳՖՀ-ն խաղաղ ճանապարհով վերամիավորվեցին: Գերմանիան դարձավ 16 դաշնային պետություններից կազմված երկիր՝ Բեռլին մայրաքաղաքով: Վերամիավորման հետևանքով մեծացավ երկրի տարածքը, բնակչության թիվը, բնական և աշխատանքային ռեսուրսները, տնտեսական ներուժը: Արևելյան մասում տնտեսական վիճակը շատ ծանր էր: Սկսվեցին շուկայական վերափոխումներ տնտեսության բոլոր ոլորտներում: Ծախսերը կատարում էր Արևմտյան Գերմանիան: Առաջացան բազմաթիվ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ: Անհրաժեշտ էր ստեղծել նոր աշխատատեղեր, բարձրացնել տնտեսական արդյունավետությունը, խրախուսել ներդրումները, ազատ մրցակցությունը, քաղաքական

ված Գերմանիան զգալի օգնություն ստացավ Եվրամիության կողմից նոր ֆեդերատիվ հողերի հետ կապված խնդիրները կարգավորելու և այլ ռիսկերի կառավարման համար:

Ազատականացվեցին գները, իրականացվեց զանգվածային սեփականաշնորհում, սկսեցին վերակառուցել ենթակառուցվածքները, մշակվեցին մի շարք վարկային և սոցիալական ծրագրեր: Վերամիավորումից հետո Արևելյան Գերմանիան կորցրեց նաև իր սպառման շուկաները և տնտեսական կապերը նախկին սոցիալիստական երկրների, հատկապես ԽՍՀՄ-ի հետ, սակայն ձեռք բերեց նաև նոր շուկաներ:

Գերմանիան սոցիալ-շուկայական տնտեսության մոդելի պատճառով լուրջ դժվարություններ էր կրում: Երկրում սոցիալական երաշխիքները շատ բարձր էին: Բարձր էին գործազրկության համար վճարվող նպաստները, որն էլ նպաստում էր պետության հաշվին ապրողների քանակի աճին, ինչն անուղղակիորեն խթանում էր գործազրկությունը՝ չխոսելով այլ ազգի ներկայացուցիչների զանգվածային ներգաղթի մասին: 1997թ. գործազրկությունը հասավ իր բարձրակետին՝ 11,3%: Աշխատավարձերի բարձր մակարդակի հետևանքով Գերմանիայում աշխատուժն ամենաթանկն է աշխարհում:

Սոցիալական երաշխիքների համակարգի պահպանումը պետությունն իրականացնում է ուժեղ ֆիսկալ ճնշման միջոցով[1]: Սրա հետևանքով երկրում շատ բարձր էր հարկերի մակարդակը, որը 1990-ական թթ. վերջերին հասավ չտեսնված չափերի: Այսպես, եթե ԱՄՆ-ում հարկերը կազմում էին չբաշխված եկամտի 32%-ը, Մեծ Բրիտանիայում՝ 45%-ը, ապա Գերմանիայում՝ 65%-ը: Հարկերի բարձր մակարդակը շատ գերմանական ընկերությունների ստիպում է իրենց արտադրական բազան զարգացնել արտասահմանում, իսկ բարձր եկամուտներով ֆիզիկական անձինք գերադասում են մշտական բնակություն հաստատել այլ երկրներում:

Հարկերի բարձր մակարդակը և արտասահմանյան ներդրումային ծրագրերի բացակայությունը բերում է նրան, որ Գերմանիան այնքան էլ հրապուրիչ չէ արտասահմանյան կապիտալի համար: Գերմանական աշխատուժի բարձր արժեքը նշանակալի նվազեցնում է նրա մրցունակությունը՝ որպես հզոր արտադրական ձեռնարկությունների հիմնավորման երկիր: Իրականում արտասահմանյան ընկերությունները հնարավորություն չունեին արտադրելու Գերմանիայում և նախընտրում էին այստեղ զբաղվել բացառապես վաճառքով: Դրա համար էլ ծայրահեղ ցածր էր արտասահմանյան ներդրումների և նրանց կողմից ստեղծված աշխատատեղերի քանակը: Օրինակ՝ Նիդերլանդներում ընդհանուր առմամբ տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումները կազմում են 35%, Մեծ Բրիտանիայում՝ 25% և նույնիսկ Ֆրանսիայում՝ 12%: Գերմանիայում չնայած վերջին 10 տարիների ընթացքում օտարերկրյա ներդրումները եռապատկվել էին՝ 1997թ. հասնելով 58 մլրդ մարկի, ընդհանուր ներդրումների միայն 7,5%-ն էր օտարերկրյա: Դրա հետ միասին այստեղ նկատվում էր գերմանական կապիտալի մասսայական արտահոսք: Գերմանական որոշ կառույցներ դուրս էին բերում իրենց արտադրական բազան աշխատուժի ավելի ցածր գնով երկրներ:

Անկասկած, սոցիալական շուկայական տնտեսությունը վնասում էր Գերմանիայում

կայունությունը, հավասարեցնել Արևելյան և Արևմտյան մասերի տնտեսության մակարդակները և այլն:

[1] Mierzejewski, Alfred C. Ludwig Erhard: A Biography (Univ of North Carolina Press, 2005); Schwarz, Hans-Peter. Konrad Adenauer: A German Politician and Statesman in a Period of War, Revolution, and Reconstruction - Vol. 2 (1995), pp.23-26.

գիտատեխնիկական առաջընթացին: Պետությունը տնտեսական քաղաքականության մեջ գերակայությունը տալիս էր ոչ թե բարձր տեխնոլոգիաների ներդրմանը, այլ՝ զանազան սոցիալական ծրագրերին: Որպեսզի բնակչության շրջանում մասսայական բողոքներ չառաջացնի, պետությունը շարունակում էր սուբսիդավորել տնտեսության վնասաբեր հատվածները: Արդյունքում Գերմանիան ոչ միայն պահպանում էր համաշխարհային շուկայում անմրցունակ ածխային, պողպատի և նավաշինական արդյունաբերությունը, այլ նաև՝ այդպիսի վնասաբեր ճյուղերի վրա ծախսում պետական բյուջեի մոտ 1/3-ը: Համեմատելով այսպիսի քաղաքականությունը ԱՄՆ-ում և Ճապոնիայում լրիվ մրցունակ ճյուղերին պետական աջակցման հետ՝ պետք է ընդունել, որ Գերմանիան լրիվ անկարող էր լուծել արդյունաբերության կառուցվածքային խնդիրները:

Այս ամենի հետևանքն այն էր, որ Գերմանիան, արդյունաբերության բազային ճյուղերում պահպանելով բարձր վարձատրվող աշխատավարձը, տնտեսության համեմատաբար ավելի արագ զարգացող սեկտորներում անընդունակ էր ստեղծել նոր աշխատատեղեր: Հետևաբար պատահական չէ, որ ծառայությունների ոլորտը, որին բաժին էր ընկնում ՀՆԱ-ի 10%-ից էլ քիչ մասը, բավականին զիջում էր առաջատար մյուս երկրների ոչ նյութական ոլորտին: Երկրում օտարերկրյա կապիտալի հասանելիության սահմանափակության հետևանքով ոչ մրցունակ էր նաև ներքին շուկան: Սոցիալական շուկայական տնտեսությունը տանում է տնտեսության մեջ բոլոր ռեսուրսների վերաբաշխմանը: ՀՆԱ-ի մեջ պետական ծախսերի բաժինը շատ բարձր է՝ մոտ 50%, իսկ պետական ծախսերի աճը ծնում է բյուջեի դեֆիցիտի և պետական պարտքի ռիսկերը, որոնց համար Մաստրիխտի արժույթի պայմանագրի քննադատներն արձանագրեցին ՀՆԱ-ում առավելագույնի հասած դրանց մակարդակը՝ համապատասխանաբար 3% և 60%: Գերմանիայի սոցիալական շուկայական տնտեսության խնդիրն ավելի բարդացրեց Գերմանիայի արևելյան և արևմտյան մասերի վերամիավորումը: Գոյություն ունեցող տնտեսական համակարգի ճգնաժամի պայմաններում միաժամանակ անհրաժեշտ էր իրականացնել կառուցվածքային վերափոխումներ Արևելյան Գերմանիայում[1]: Անհրաժեշտ էր փակել տնտեսության ոչ մրցունակ արտադրական ճյուղերը, նվազեցնել գործազրկության մակարդակը և սոցիալական լարվածությունը նախկին ԳԴՀ-ում: Արևելյան մասի հետամնացության ռիսկի հաղթահարման համար անհրաժեշտ էր մոտ 2 տրլն գերմանական մարկի չափով ներդրում, որը տնտեսության ճգնաժամային պայմաններում բավականին դժվար էր կատարել: Երկու մասերի զարգացման մակարդակները հավասարեցնելու համար նույնիսկ մտցվեց հատուկ «հավասարության հարկ»՝ ենթադրելով կորպորացիաների և ֆիզիկական անձանց եկամուտներից գանձվող հարկերի մակարդակի բարձրացում: Պետք էր նաև Արևելյան մասում աշխատանքի արտադրողականությունը հասցնել մոտ երեք անգամ վերջինիս գերազանցող Արևմտյան Գերմանիայի ստանդարտներին: Մասնավորեցման և կառուցվածքային վերափոխումների ռիսկերից Արևելյան Գերմանիայի բնակչությանը պաշտպանելու համար անհրաժեշտ էր մշակել ճիշտ սոցիալական քաղաքականություն: Այս ամենը ֆեդերալ իշխանություններից նոր ծախսեր էր պահանջում, իսկ երկրի բյուջեն գնալով ավելի քիչ էր հաղթահարում իր սոցիալական ծանրաբեռնվածությունը: Իր տնտեսական առաջնությունը շարունակելու համար

[1] http://www.de-web.ru/

Գերմանիային անհրաժեշտ էր տնտեսության ազատականացում և ամերիկյան օրինակով կոնսերվատիվ վերափոխումներ: Հակառակ դեպքում երկրի զարգացման նախկին մոդելը դառնում էր անմրցունակ ոչ միայն ԱՄՆ-ի համեմատ, այլ նաև՝ Եվրոպայում: Գերմանիան գրեթե չէր կարողանում իրականացնել Եվրոպայի և ԵՄ-ի զարգացման լոկոմոտիվի իր դերը: Նույնիսկ եվրոպական միասնական արժույթի՝ եվրոյի թուլությունը մինչև 1999 թ. I կեսը, կապված էր առավելապես Գերմանիայի ներտնտեսական խնդիրների հետ: Գերմանիայում արդեն 1990-ական թթ. վերջերին առկա էին ՀՆԱ-ի աճի բավականին ցածր տեմպեր, ինչը մոտ 3 անգամ զիջում էր այդ շրջանում ԱՄՆ-ի տնտեսական աճին: Մինչև 1999 թ. ամառը գերմանական արժույթի՝ մարկի փոխարժեքը շարունակում էր իջնել՝ հուլիսի վերջին հասնելով 1 ԱՄՆ դոլլարի համար 1,92 գերմանական մարկի չափին: Սոցիալական շուկայական տնտեսական համակարգի շնորհիվ Գերմանիայում բավականին հազվադեպ էին գործադուլները: Այստեղ 1990-2002թթ. ամեն 1000 աշխատանքային օրվա ընթացքում գրանցվել է միայն 12 գործադուլ, ինչն իրականում շատ քիչ է ԵՄ միջինից՝ 84 գործադուլ 1000 աշխատանքային օրվա ընթացքում: Առաջատար արդյունաբերական երկրներից ավելի քիչ գործադուլ անում են միայն Ճապոնիայում և Շվեյցարիայում: Գերմանիայում արհմիությունների և գործարանների միջև սոցիալական համագործակցությունը, շնորհիվ կոնֆլիկտների ինստիտուցիոնալացված կարգավորման, ամրացված է կոլեկտիվ աշխատանքային իրավունքի շրջանակներում: Հիմնական օրենքը երաշխավորում է տարիֆային ինքնավարությունը, որը սոցիալական կառույցների հայեցողությանն է թողնում աշխատանքային պայմանները կոլեկտիվ պայմանագրերի շրջանակներում ինքնուրույն կարգավորելու իրավունքը:

Հետպատերազմյան բարեփոխումների լավագույն արդյունքներից մեկը տրանսպորտային ցանցի ձևավորումն ու անընդհատ արդիականացումն է, ինչը տնտեսության կենսականորեն խիստ կարևոր ու զարգացած ճյուղն է: Գերմանիան մշտապես ունեցել է աշխարհի լավագույն ավտոճանապարհների խիտ ցանց: Այժմ ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը 221000 կմ է, որից 11000 կմ-ը բարձրակարգ արգելթաց ճանապարհներ են: Այս ցուցանիշով Գերմանիան աշխարհում զիջում է միայն ԱՄՆ-ին: Երկաթուղիները կապ են հաստատում երկրի բոլոր տարածաշրջանների 250 քաղաքի միջև: Արդիականացվում են նախկին ԳԴՀ-ի երկաթուղիները: Գործարկվել է երկաթուղի, որով գնացքները երթևեկում են 250 կմ/ժամ արագությամբ: Չնայած արտահանման և ներկրման մեծ ծավալների՝ Գերմանիան ունի ոչ մեծ, սակայն նոր և արդիական առևտրային նավատորմ: Արտաքին տնտեսական կապերը երկրի տնտեսական զարգացման կարևորագույն նախադրյալն են: Գերմանիան առավել սերտ տնտեսական կապ է իրականացնում Եվրամիության շրջանակներում:

Գերմանիայի կարևորագույն առևտրական գործընկերներն են Ֆրանսիան, ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան: Մինչև գլոբալ ֆինանսական ճգնաժամը Ֆրանսիա արտահանված ապրանքների և ծառայությունների արժեքը 75 մլրդ. եվրո էր, ԱՄՆ՝ 65 մլրդ եվրո, իսկ Մեծ Բրիտանիա՝ 61 մլրդ եվրո: Արդեն 1990-ական թթ. սկզբներին գերմանական ֆիրմաները սկսեցին արտահանել իրենց արտադրանքը ԵՄ անդամ արևելաեվրոպական երկրներ և Ասիա: Այսպես, նախկին անցումային տնտեսությամբ եվրոպական երկրներում արդեն 2001-2002թթ. գերմանական ֆիրմաների դուստր ձեռնարկություններում աշխատում էր 830000 մարդ, իսկ այդ թիվը 1990թ. վերամիավորման հետևանքով գրեթե զրո էր: Անընդհատ աճում են նաև ասիական երկրների հետ տնտեսական և առևտրա-

կան կապերը: Օրինակ՝ Չինաստան և Հնդկաստան մինչև գլոբալ ֆինանսական ճգնաժամն արտահանվել է համապատասխանաբար 21 և 3,2 մլրդ. եվրո արժողությամբ ապրանքներ և ծառայություններ, այնտեղից ներմուծվել 32 և 3 միլիարդ եվրո արժողությամբ ապրանքներ և ծառայություններ: Ակնհայտ է, որ Գերմանիան, առանց համաշխարհային առևտրի մեջ ինտեգրման, չէր կարող պահպանել ժամանակակից հետինդուստրիալ երկրի իր դիրքերը: Չնայած զարգացման բարձր մակարդակին և համաշխարհային տնտեսության մեջ ունեցած կարևոր դերի՝ 1990թ. վերամիավորումից հետո Գերմանիայի համար կարևորագույն խնդիր է մնում սոցիալական միասնականության ձեռքբերումը: Այսպես, գործազրկության մակարդակը բարձր է ամբողջ երկրում, բայց Արևելյան մասում այն 2 անգամ գերազանցում է Արևմտյան մասին: Այնուամենայնիվ, տնտեսական վերելքով երկրի արևելքում հասել են մեծ հաջողությունների: Այստեղ արդեն տրանսպորտը և հեռահաղորդակցության միջոցները աշխարհում ամենաժամանակակիցներից են: Վերամիավորումից հետո մեծ նվաճում է նաև Արևելյան Գերմանիայում ավելի քան 500.000 նոր ձեռնարկությունների ստեղծումը: Նշանակալի առաջընթաց է ապրել նաև Գերմանիայի երկու մասերում կյանքի պայմանների հավասարեցումը: 2020թ. արդեն ավարտված Համերաշխության II ծրագիրը, որը գնահատվում էր մոտ 156 մլրդ. եվրո, ապահովեց Արևելյան Գերմանիայի հետագա զարգացումը և ֆինանսական հատուկ օգնությունը: Քանի որ Գերմանիայի արևելքում ամբողջ արդյունաբերությունը հնացել էր, հսկայական ուժեր պահանջվեցին այն արդիականացնելու համար: Վերամիավորումից հետո այնտեղ տարեկան մոտ 80 մլրդ. եվրո էր փոխանցվում, ինչը համապատասխանում էր Գերմանիայի ՀՆԱ-ի 4%-ին: Այնուամենայնիվ, կոնվերգենցիայի գործընթացն ընթանում էր ավելի դանդաղ, քան սպասվում էր:

Եզրակացություն

Այժմ աճի նոր շաժիչ ուժը վերամշակող արդյունաբերությունն է: Արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է: Տարեկան արտադրվող ավտոմեքենաների քանակով Գերմանիան զիջում է միայն ԱՄՆ-ին ու Ճապոնիային, սակայն դրանց որակով, կարելի է ասել՝ առաջինն է աշխարհում: Ավտոմոբիլային խոշորագույն միավորումներն են «Ֆոլկսվագեն»,որի կենտրոնը Վալֆսբուրգ քաղաքն է, «Դայմլեր Քրայսլերը», որի կենտրոնը Շտուտգարտն է և «Բի էմ Դաբլյու» «ԲՄՎ»-ն, որի կենտրոնը Մյունխենն է: Ավտոմոբիլաշինությունից բացի՝ զարգացած են նաև հաստոցաշինական, Գայլ ճյուղեր ու արտադրություններ: Մեքենաշինական միավորումներից աշխարհում հայտնի են «Սիմենսը» (կենտրոնը՝ Մյունխեն), «Բոշը» (կենտրոնը՝ Շտուտգարտ): Համախառն արտադրանքի արժեքով, մեքենաշինությունից հետո՝ երկրորդը քիմիական արդյունաբերությունն է, որի համար հումք են ծառայում կալիումական աղը, ածուխը, մետաղաձուլության թափոնները, ներկրվող նավթն ու գազը: Արտադրվում են հայտնի գրեթե բոլոր քիմիկան ու դեղագործական ապրանքները: Խոշոր մենատիրական միավորումը «Բայերն» է (կենտրոնը՝ Լևերկուզեն): Սև մետաղաձուլությունը հենվում էր սեփական կոքսացող քարածխի ու ներկրվող երկաթի հանքաքարի վրա: Պողպատի ձուլմամբ Գերմանիան աշխարհում գրավում էր 6-րդ տեղը[1]: Արտադրանքի աճն առաջվա պես

[1] “Экономика зарубежных стран” А.И.Погорлецкий Санкт-Петербург, 2001 http://www.eriwan.diplo.de

բարձր է: Քանի որ արևելյան մասում աշխատուժի մեկ միավորի արժեքն ավելի ցածր է, քան Արևմտյան Գերմանիայի միջինը և օգտագործվում է բացառապես ամենաժամանակակից տեխնիկան, ապա այս հատվածում ևս ձեռք են բերվել Արևմտյանի չափանիշները: Բնակչության մեկ շնչի զուտ եկամուտը կազմել է մոտ 14.300 եվրո (17.300 եվրո՝ Արևմտյանում): 1991 թ. հետ համեմատած՝ այն աճել է երկու անգամ:

REFERENCES

1. Berghahn, Volker R. "Ordoliberalism, Ludwig Erhard, and West Germany's "economic basic law"." European Review of International Studies 2.3 (2015): 37-47; Goldschmidt, Nils. "Alfred Müller-Armack and Ludwig Erhard: Social Market Liberalism" (No. 04/12. Freiburg discussion papers on constitutional economics, 2004).
2. Diessner S, Durazzi N, Hope D. Skill-Biased Liberalization: Germany's Transition to the Knowledge Economy. *Politics & Society*. April 2021. doi:10.1177/00323292211006563
3. *Gray, William Glenn (2007). "Adenauer, Erhard and the Uses of Prosperity". German Politics and Society. 25 (2): 86–103.* doi:10.3167/gps.2007.250206; Henderson, David R. "German Economic Miracle." The Concise Encyclopedia of Economics (2008).
4. http://www.de-web.ru/
5. Mierzejewski, Alfred C. Ludwig Erhard: A Biography (Univ of North Carolina Press, 2005); Schwarz, Hans-Peter. Konrad Adenauer: A German Politician and Statesman in a Period of War, Revolution, and Reconstruction - Vol. 2 (1995), pp.23-26.
6. The Marshall Plan : a reality check, N. Crafts, Published 1 August 2011, Political Science, https://www.semanticscholar.org/paper/The-Marshall-Plan-%3A-a-reality-check-Crafts/84703f9fdc5693011889439b0927d71c1b4c9bc0
7. *Thiemeyer, Guido (2007). "The 'Social Market Economy' and Its Impact on German European Policy in the Adenauer Era, 1949–1963". German Politics and Society. 25 (2): 68–85; Van Hook, James (2004). "Ludwig Erhard, the CDU, and the Free Market".* Rebuilding Germany: The Creation of the Social Market Economy, 1945–1957. *New York:* Cambridge University Press. *pp.* 139*–188.*

РЕЗЮМЕ

Послевоенный опыт управления рисками в Германии

Татул Манасерян

Доктор экономических наук, профессор, ЕГУ

Ереван, Республика Армения

Ключевые слова: Управление рисками, восстановительный рост, конвергенция, конкурентоспособность, ВВП

В послевоенный период предприниматели столкнулись с новыми проблемами, неведомыми периоду устойчивого развития. Они разнообразны, имеют определенные особенности для каждой страны, однако поучительно анализировать опыт стран в таких ситуациях, а в некоторых случаях даже возможно локализовать его, учитывая уникальные условия Армении и Арцаха. В послевоенный период опыт управления экономическими рисками Германии весьма поучителен: ей удалось добиться высокого уровня конкурентоспособности, государства имели не только экономическую, социальную, но и

совершенно разную политическую систему. В результате страна с побежденной экономикой, потерпевшая поражение во Второй мировой войне, развивалась, воссоединилась, стала одной из самых развитых стран мира, сыграла ключевую роль в становлении Европейского Союза и одновременно стала успешный пример экономической конвергенции. Занимает третье место в капиталистическом мире по валовому национальному продукту (выпуску продукции) после США и Японии, по уровню развития является постиндустриальной страной. Все это, конечно, содействующие факторы, и решающим фактором в управлении экономическими рисками послевоенной Германии была разработка и реализация программы социальной рыночной экономики Людвига Эрхарда.

SUMMARY

Post-War Risk Management Experience in Germany

Tatul Manaseryan

Doctor of Economics, Professor, YSU

Yerevan, the Republic of Armenia

***Keywords**:* Risk management, recovery growth, convergence, competitiveness, GDP.

In the post-war period, entrepreneurs faced new challenges, unknown to the period of sustainable development. They are diverse, have specific features for each country, but it is instructive to analyze the experience of countries in such situations, and in some cases it is even possible to localize it, given the unique conditions of Armenia and Artsakh. In the post-war period, the experience of managing economic risks in Germany is very instructive: it managed to achieve a high level of competitiveness, the states had not only economic, social, but also completely different political systems. As a result, the country with a defeated economy, defeated in World War II, developed, reunited, became one of the most developed countries in the world, played a key role in the formation of the European Union and at the same time became a successful example of economic convergence. It ranks third in the capitalist world in terms of gross national product (output) after the United States and Japan, and is a post-industrial country in terms of development. All of these are contributing factors, of course, and the decisive factor in managing the economic risks of post-war Germany was the development and implementation of Ludwig Erhard's social market economy program.